ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ փետրվարի 6 N 16 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

<<ԱՆՏԱՌՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՕՀԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, << ԿԱՐԲԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԿԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ–728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2018 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Անտառուտի միջնակարգ դպրոց>>, <<Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Կարբիի միջնակարգ դպրոց>>, <<Կարինի միջնակարգ դպրոց>>, <<Ավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2015-2017թթ համակարգի գնահատման աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Ենոք Մինասյանի, Արթուր Կարապետյանի, Գոռ Եգորյանի և Սիրան Ասատրյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 21 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի փետրվարի 7-ից ավարտել մարտի 7 -ին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ